



**Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ ՈՒ Թ Յ Ա Ն  
Վ Ա Յ Ո Ց Ձ ՈՐ Ի Մ Ա Ր Ձ Պ Ե Տ Ա Ր Ա Ն Ի  
Գ Լ Խ Ա Վ ՈՐ Ք Ա Ր Տ ՈՒ Ղ Ա Ր**

« 23 » փետրվար 2023թ  
ք. Եղեգնաձոր

**Հ Ր Ա Մ Ա Ն N 45**

**Վ Ա Յ Ո Ց Ձ ՈՐ Ի Մ Ա Ր Ձ Պ Ե Տ Ա Ր Ա Ն Ի Ի Ր Ա Վ Ա Բ Ա Ն Ա Կ Ա Ն Բ Ա Ժ Ն Ի Պ Ե Տ Ի  
Ք Ա Ղ Ա Ք Ա Ց Ի Ա Կ Ա Ն Ծ Ա Ռ Ա Յ ՈՒ Թ Յ Ա Ն Պ Ա Շ Տ ՈՆ Ի Ա Ն Ձ Ա Գ Ր ՈՒ Մ Լ Ր Ա Ց ՈՒ Մ Ն Ե Ր  
Կ Ա Տ Ա Ր Ե Լ ՈՒ Մ Ա Ս Ի Ն**

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 5-րդ հոդվածով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի 2023 թվականի փետրվարի 23-ի N/45.7/6488-2023 գրությամբ ներկայացված համաձայնությունը.

**Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ՝**

1. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի գլխավոր քարտուղարի 2019 թվականի նոյեմբերի 15-ի N206 հրամանով հաստատված /հավելված 1/

«1. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի իրավաբանական բաժնի պետի (ծածկագիր՝ 99-3.1-Ղ4-1)» քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրում կատարել հետևյալ լրացումները.

**«2.1 Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները» բաժինը** լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր «11»-րդ կետով՝

«11. իրականացնում է համապատասխան պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի իրավասության շրջանակներում իրականացվող հակակոռուպցիոն միջոցառումների և պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կողմից հակակոռուպցիոն ոլորտի միջազգային պարտավորությունների կատարմանն ուղղված աշխատանքների համակարգումը:»

**Իրավունքները՝ ենթաբաժինը** լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր «6»-րդ և «7»-րդ կետերով՝

«6. համապատասխան պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կողմից իրականացվող հակակոռուպցիոն ծրագրերի շրջանակներում տվյալ մարմնի ստորաբաժանումներից պահանջել և ստանալ տեղեկատվություն.

7. հակակոռուպցիոն քաղաքականության և մոնիտորինգի համար պատասխանատու մարմնից պահանջել և ստանալ մեթոդական աջակցություն, խորհրդատվություն

ռազմավարական փաստաթղթերով նախատեսված հակակոռուպցիոն ոլորտի միջոցառումների և ոլորտային միջազգային պարտավորությունների վերաբերյալ:»

**Պարտականությունները՝ ենթաբաժինը** լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր «7»-րդ կետով՝

«7.տրամադրել համապատասխան մարմնի գործառույթներին առնչվող ռազմավարական փաստաթղթերով նախատեսված՝ հակակոռուպցիոն ոլորտի միջոցառումների և ոլորտային միջազգային պարտավորությունների կատարման վերաբերյալ տեղեկատվություն, պարզաբանումներ, միջոցներ ձեռնարկել համապատասխան մարմնի կողմից ոլորտային միջազգային պարտավորությունների կատարումն ապահովելու ուղղությամբ:»

23.02.2023

X 

ԱՐՍԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Signed by: KARAPETYAN ARSEN 1710660295

Ա.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

